



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

339  
10/10

860



203.7  
10-84




91188-42

203.7  
14-84

# ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

Ս Ր Բ Ո Յ Պ Ա Տ Ա Ր Ա Գ Ի

ԸՍՏ ԾԻՍԻ



ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ



ՉՈՐՀՐԴԳ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՏԳՐԱՆԻ ՍՐՈՑ ԿԱՌԱՎՈՒ ԷԶՄՈՒՆԻ

Ի ՎԱՂԱՐՁԱՊԱՏ

10051

1880 — ԱՅԼ

12521177901

4 9 0 1 0 2 0 0 8 0 9 0

0115 303

3143 1343 41405 2071000

Հ Ի Մ Ե Ն Ե Ի

Տ. Տ. ԳԷՈՐԳՍՅ Դ.

ՂԵՀԱԾԱԲ ԵՐ ՄԲԲԱԶՆԱԲՈՅՆ ԿԱՐՈՐԳՐԱՄԵ

Ը Մ Ե Ն Ե Յ Ն Հ Ե Յ Ո Յ .



5005-50

91188-42

120 01

131-0581

Ա. Զ. Գ.

Խորհրդարանի անուանակալ գրքոյիս՝ կարգադրեալ ի սրբոց հարց մերոց ըստ առաքելական աւանդու-  
թեանց իպէտս խորհրդոց սրբոց Պատարագի, թէև քանիցս տպագրեալ է սատ ի սուրբ Էջմիածին, ի Ա.  
Պոլիս և յայլուր, բայց յաղաղ սպասելոյ օրինակացն սատ տպագրելոց՝ հարկ կարօտութեան եկեղեցեաց  
մերոց ստիպեցին ձեռն արկանել և ի ներկայ տպագրութիւն ըստ կանխադրյն հաճութեան Ա. Ն. հափառ  
Հոգևոր Տեառն մերոց Արքայնակատար Հայրապետի ամենայն Հայոց:

Ե. յլ քանզի՝ որք մինչև ցայսօր տպագրեալք էին՝ անհամաձայն միմեանց ի տեղիս տեղիս ունէին  
զբառս ինչ և զարարողական ձևոց զխրատու, վասն որոյ պատուական Հայրապետս մեր Տ. Տ. Գեորգ Գ. —  
որ յաւուրց անտի Պահակաբութեան իւրոյ փոյթ յանձին կալաւ մաքրել նաև զեկեղեցական գրեանս մեր  
ի վերիպակաց յանդէտս ի ներքս սարգիւրց յանհմուտ գրչաց և յանզոյշ տպագրողաց, որպիսիք են տպա-  
գրեալքս ի տպարանի Մայր Աթոռոյս կարի իմն զգուշաւոր հետադատութեամբ և բաղրատութեամբ ընդ  
հնազոյն օրինակս՝ այս է Անտոն օճման Աթուղիկոսի ամենայն Հայոց, Անտոն Միւռնի օրհնութեան,  
Անտոն ձեռնադրութեան Կախիկոսի, Մաշտոց ձեռնադրութեան Քահանայից, սարկաւազաց, զպրաց,  
վեղար տալոյ արեղայից, և շնորհելոյ զբաւարան Աւարդապետութեան՝ զաստիճանն Մանաւոր և Ծայ-  
րազոյն իշխանութեան, Մաշտոց փոքր յառձեռն պէտս զորձաճութեան քահանայից, Ղաշոց անուանակալ  
զերբն, Չայնազրեալ Ժամադիրք՝ Շարական և Երզնցողութիւնք սրբոյ Պատարագի, և հուսի սպա  
Խորհրդատեարս այս, որոյ վասն խնամով իմն փոյթ տարեալ Հոգևոր Տէրն, — հրամայեաց՝ զի որքան  
ձեռագիր Խորհրդատեարք զտանին ի Մատենադարանի Մայր Աթոռոյս և ի մերձակայ վանորայս, զամե-  
նեսեան ի մի հաւաքեալ բաղրատեացուք ընդ միմեանս և ուղղեացուք զամենայն զվերիպակս գրչաց և տպա-  
գրութեանց ըստ համաձայնութեան մեծազոյն մասին հնազոյն և ընտրելոցն օրինակաց եթէ ձեռագրաց  
և եթէ տպագրելոց:

Բաղում էին զգրչադիր օրինակք Խորհրդատեարի ի Մատենադարանի Մայր Աթոռոյս ընդ բերելոց  
ի վանայն Հառիճոյ, Սանահնի, Սեւանայ, Մաղարթայ և այլոց, յորոց զբաւատուն ընտրելազոյն և հնա-  
զոյն զօրինակս միայն որոշեալ առաք ի բողոքատութիւն, յորս ոչ սակաւ տարբերութիւնք երեւցան ի մի-  
ջի, եր որ ի բառս, եր որ ի դասաւորութիւնս սղօթից, և եր որ ի խրատու արարողութեանց. էին և ոմանք՝  
որք կամ զխրատուցն զանց արարեալ էին և կամ համառօտ իմն բանիւք նշանակեալ: Ունէին և ոմանք  
զտարբերութիւնս ի կարգս զգետուց, զի մին զմի միայն գնէր զաղօթս բաղրատանին, և այլք զերկուս՝ ու-  
րոյն ուրոյն վասն երկուցն ձեռաց:

Եւ ի բազում տեղեւ ուր հարին պահանջէր ի պարզութիւն ձեռն արարողութեան՝ յաւելաք և զխրատս ի զիւրութիւն պաշտօնէից խորհրդոյն:

Յետ այսպէս աւարտելոյ զբաղդատութիւն քառասուն օրինակաց, ներկայացուցաք ի նկատողութիւն Սրբազնատուրք մերոյ Հայրապետի, որ ըստ իւրումն քաջ հմտութեան նրբազնինքն կղեւալ առ մի մի յօգուածս տարբերութեանց իւրաքանչիւր օրինակաց, հրամայեաց տպագրել զայս օրինակ և ձրիպէս նուիրել ամենայն եկեղեցեաց Հայոց ի յիշատակ ի Տէր հանդուցեալ Տնողաց. Իւրոց բարեպաշտ պարօն Պետրոսի և բարեպաշտուհի տիկնոջն Սրբուհւոյ, որոց զհողին լուսաւորեսցէ Տէր:

Երդ ըստ այսմ՝ հրամանի՝ Նորին Սրբութեան ահաւաստի տամք ի լոյս և զայս Խորհրդատար համաձայն Նորորդ տպագրութեանն օրինակի ի փառս միոյն Աստուծոյ, ի բարեգարողութիւն աստուածապաշտական կարգաց և ի պէտս Հայաստանեայցս առաքելական սուրբ Եկեղեցւոյ:




# ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

Ս Ր Բ Ո Յ Պ Ա Տ Ա Ր Ա Գ Ի .

## ԿԸՆՈՒՆ

ՁԳԵՍՏԱԻՈՐԼՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՉ ՔԱՀԱՆԱՅԻ.



Մտցէ Քահանայն յաւանդատունն հանգերձ սարկաւազօք եւ զպօք, եւ նախ զգեցեալ սարկաւազացն եւ այլ պաշտօնէից, ասացին Սարմոս (ձԼԱ) տուն առ տուն:

Ալէլուիա ալէլուիա.

(Սաղ. — Բահ.) : — Քահանայք քո զգեցցին զարդարութիւն, եւ սուրբք քո ցնծալով ցնծացին:

(Փ.Ի. — Սբ. Գ.) : — Յիշեա. Տէր զԴաւիթ եւ զամենայն հեղութիւն նորա:

Որպէս երգուաւ Տեառն, եւ սխտս եղ Աստուծոյ Յակոբայ:

Թէ ոչ մտից ի յարկս տան իմոյ. եւ թէ ելից յանկողինս մահճաց իմոց:

Թէ տաց քուն աչաց իմոց, կամ նինջ արտեւանաց իմոց, կամ հանգիստ իրանաց իմոց, մինչեւ գտից զտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակոբայ:

Ահա լուաք զնմանէ յեփրաթայ, եւ գտաք ըզնա ի զաշտս մայրեաց:

Մտցուք ի յարկս նորա, երկիրպագցուք ի տեղւոջ՝ ուր կացեալ են ոտք նորա:

Արի Տէր ի հանգիստ քո, գու եւ տապանակ կտակի սրբութեան քո:

Երիցունք քո զգեցցին զարդարութիւն, եւ սուրբք քո ցնծալով ցնծացին:

Վասն Դաւթի սիրելոյ քո՝ մի գարձուցաներ զերեսս քո յօծելոյ ըուժմէ:

Երգուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ եւ ոչ ստեաց նմա, ի պաղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա:

Թէ պահեսցին որդիք քո զօրէնս իմ, եւ զփայտութիւնս իմ զոր ուսուցից նոցա:

Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաւիտենից յոթոռ քո-

Հաճեցաւ Տէր ընդ Սիօն, եւ ընտրեաց բնակիլ ի նմա, առէ. այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից, ի սմա բնակեցայց զի հաճեցայ ընդ սա:

Ձայրիս սորա օրհնելով օրհնեցից, եւ զաղբաւորս սորա լցուցից հացիւ:

Երիցանց սորա զգեցուցից զիրկութիւն, եւ սուրբք սորա ցնծալով ցնծացին:

Անդ ծագեցից զեղջիւր ի Դաւիթ, պատրաստ արարից զճրագ օծելոյ իմոյ:

Թշնամեաց նորա զգեցուցից զամօթ, եւ ի վերայ նորա ծաղկեսցի սրբութիւն իմ:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ:

Այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Սարկաւազն քարոզեսցէ:  
Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. Խնդրեսցուք հաւատով միարանութեամբ ի Տեառնէ, զի զողորմութեան զընտրէս իւր արասցէ ի վերայ մեր. ամենակալ Տէր Աստուած մեր կեցուցէ եւ ողորմեսցի:

Քահանայն ասացէ երկուսասն Տէր ողորմեսցուք, եւ զաղօթս զայս ի ծածուկ:

Որ զգեցեալ էս զլոյս որպէս հանգերձ, Տէր մեր Յիսուս Քրիստոս, անձառելի խոնարհութեամբ յերկրի երեւցար և ընդ մարդկան շրջեցար: Որ եղեր քահանայապետ յաւիտենից ըստ կարգին

Մեքիսեդեկի և զարդարեցեր զկեղեցիք սուրբ: Տէր ամենակալ, որ պարզեցեր մեզ զնոյն զերկնային հանդերձ զգնուլ, արժանի արա և զիս իժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո, որ համարձակիմ և մերձենամ ի նոյն հոգևոր պաշտօն փառաց քոց: Որպէս զի զամենայն ամբարշտութիւնս մերկացայց, որ է հանդերձ պղծութեան, և զարդարեցայց լուսով քով. ընկեա՛ յինէն զչարիս իմ, և թօթափեա՛ զյանցանս իմ, որպէս զի արժանի եղէց հանդերձեալ լուսոյդ առ ի քէն: Շնորհեա՛ ինձ քահանայական փառօք մտանել ի պաշտօն սրբութեանց քոց ընդ այնոսիկ՝ որք անմեղութեամբ պահեցին զպատուիրանս քո. զի և ես պատրաստ գտայց երկնաւոր առաջատիղ ընդ իմաստուն կուսանսն փառաւորել զքեզ Քրիստոս, որ բարձեր զմեզս ամենեցուն. զի դու ես սրբութիւն անձանց մերոց, և քեզ բարերարիդ Մատուցոյ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Եւ մատուցեալ կիսատարկաւազացն զգեցուցեն զհանդերձանս անելով վասն իւրաքանչիւրոցն, և ես խորազութեան զՏէր աղաչեցի:

Քահանայն խաչակնքելով ի վերայ իւրաքանչիւրոցն ասացէ.  
Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Նախ դեցէ Քահանայն զտղթն ի գլուխ իւր ասելով.  
Միք Տէր սաղաւարտ փրկութեան ի զլուխ իմ՝ զնշան խաչի քո, պատերազմել ընդ զօրութիւնս թշնամոյն, շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որում վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՇԱՊԿԻՆ.

Չգեցո՛ Տէր ինձ հանդերձ փրկութեան և պատմուձան ուրախութեան, և շուրջ պատեա՛ զգգեստովս փրկութեան. շնորհ:

ՓՈՐՈՒՐԱՐԻՆ.

Չգեցո՛ Տէր պարանոցի իմում զարգարութիւն, և սրբեա՛ զսիրտ իմ՝ յամենայն ազտեղութենէ մեղաց. շնորհ:

ԹԱՀԿԻՆԱԿԻՆ.

Սրբեա՛ Տէր զձեռս իմ՝ յամենայն ազտեղութենէ մեղաց. շնորհ:

ԳՕՏԻՈՅՆ.

Շուրջ պատեսցէ կամար հաւատոյ զմէջս սրտի իմոյ և զմտացս, և շիջուցէ ի սոցանէ զխորհուրդս ազտեղիս. և զօրութիւն շնորհաց քոց յամենայն ժամ ընակեսցէ ի սոսա. շնորհ:

ԲԱԶՊԱՆԻՆ ԵՎ ԶԱԶԱՆԱՅ ԶԵՌՆ.

Տուր Տէր զօրութիւն ձեռին իմոյ, և լուս զամենայն ազտեղութիւնս իմ, որպէս զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութեամբ հոգւոյ և մարմնոյ. շնորհ:

ԲԱԶՊԱՆԻՆ ԵՎ ԶԱԶԱՆԱՅ ԶԵՌՆ.

Տուր Տէր զօրութիւն ձեռին իմոյ, և լուս զամենայն ազտեղութիւնս իմ, որպէս զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութեամբ հոգւոյ և մարմնոյ. շնորհ:

ԱԵՎԱՍԻՆ (ԱՄԲԸԱՄԱԿԻՆ).

Միք Տէր վարչամակ փրկութեան պարանոցի իմոյ և մաքրեա՛ զիս աստուածային զօրութեամբդ. շնորհ:

ՇՈՒՐԱՆՈՒՆ (ՆԱՓՈՐՏԻՆ).

Տէր ողորմութեամբ քով զգեցո՛ ինձ զգեստ պայծառ, և պարսպեա՛ ընդ դէմ ներգործութեան չարին, զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անունդ. շնորհ:

Եւ ապա ասացէ.

Յնձասցէ անձն իմ ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան և պատմուձան ուրախութեան. իբրև փեսայի եղ ինձ պսակ, և որպէս զհարսն զարդու զարդարեաց զիս. շնորհ:

ՄԱՐԿԱՆ.

ԿԵՆՈՆ

Ս Պ Ա Ս Գ Ն Ե Լ Ո Յ.

Գրեալ է փար ասենն եկեղեցւոյն սկսանիցն զՆՈՐԶՈՒՐԳ ԽՈՐԻՆ և քահանայն հանդերձ Սարկաւազօք եկեսցէ առաջի բեմին եւ լուսացէ զձեռս ասելով ի ծածուկ (Սարգսոս Եւ. 49):

Լուսացից սրբութեամբ զձեռս իմ, եւ շուրջ եղէց զսեղանով քով Տէր:

Սարկաւազօք. — փոխ.  
Դատ արա ինձ Տէր, զի ես յամբժութեան իմում գնացի. ի Տէր յուսացայ՝ զի մի եղէց հիւանդ:

Փորձեա՛ զիս Տէր եւ քննեա՛ զիս. փորձեա՛ զերկամունս իմ եւ զսիրտ իմ:

Ողորմութիւն քո Տէր առաջի աչաց իմոց, եւ հաճոյ եղէց ճշմարտութեան քում:

Ոչ նստայց ես յաթոռս նանրաց. եւ ընդ անօրէնս ես ոչ մտից:

Ստեցի ես զժողովս չարաց. եւ ընդ ամբարիշտս ես ոչ նստայց:

Լուսացից սրբութեամբ զձեռս իմ, եւ շուրջ եղէց զսեղանով քով Տէր:

Լսել ինձ զձայն օրհնութեան քոյ, եւ պատմել զամենայն սքանչելիս քո:

Տէր սիրեցի զվայելչութիւն տան քո, եւ ըրտեղի յարկի փառաց քոց:

Մի կորուսաներ ընդ ամբարիշտս զանձն իմ, եւ մի ընդ արս արիւնահեղս զկեանս իմ:

Որոց ձեռք իւրեանց յանօրհնութեան են. եւ աջ նոցա լի է կաշառօք:

Ես յամբժութեան իմում գնացի, փրկեա՛ զիս Տէր եւ ողորմեա՛ ինձ:

Ոտն իմ կացցէ յուղղութեան.

Յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ.

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

(ԲԿ.) :— Մ ասն սրբուհւոյ Մատուածածնի բարեխօսութեան Տէր՝ ընկալ զաղաչանս մեր և կեցո՛ զմեզ:

(ՍԲ.) :— Սուրբ զՄատուածածնին և զամենայն սուրբս:

(ԲԿ.) :— Ընկալ Տէր զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ Մատուածածնի անարատ ծնողի՝ միածնի Որդւոյ քո՝ և աղաչանօք ամենայն սրբոց քոց և որոց այսօր է յիշատակ (Կա՛ առուրս շնորհիւ). լուր մեզ Տէր և ողորմեա՛, ներեա՛ քաւեա՛ և թող զմեզս մեր: Արժանաւորեա՛ զօհո թեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ և ընդ սրբոյ Հօգւոյդ, այժմ և: Խոստովանիմ առաջի Մատուածոյ և սրբուհւոյ Մատուածածնի, և առաջի ամենայն սրբոց, և առաջի ձեր հարբ և եղբարք, զամենայն մեզս զորս գործեալ եմ. քանզի մեղայ խորհրդով՝ բանիւ և գործով, և ամենայն մեղօք զոր գործեն մարդիկ, մեղայ, մեղայ, աղաչեմ ըզձեզ, խնդրեցէք վասն իմ յՄատուածոյ զթողութիւն:

Եւ ասացէ զՄատուածածնին և զամենայն սուրբս:

Ողորմեցի քեզ Մատուած հօրն և թողութիւն շնորհեցէ ամենայն յանցանաց քոց՝ անցելոյն և այժմուս, և յառաջակայէն փրկեսցէ, և հաստատեսցէ յամենայն գործս բարիս, և հանգուցէ զքեզ ի հանդերձեալ կեանս:

(ԲԿ.) :— Ազատեսցէ և զձեզ մարդասէրն Մատուած և թողցէ զամենայն յանցանս ձեր. տացէ ժամանակ ապաշխարելոյ և գործելոյ զբարիս. ուղղեսցէ և զառաջակայ կեանս ձեր շնորհօք սուրբ Հօգւոյն հօրն և ողորմածն, և նմա փառք յաւիտեանս. ամէն:

Ճամբորհներն.  
Յիշեալքի գմեղ առաջի անմահ Վատու-  
ծոյ:

(Բհ.):— Յիշեալ լիջիք առաջի ան-  
մահ Վատուծոյ:

Փոխառաք տուն առ տուն.—(Ստղմոս Գթ. փոս):

Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր. ճա-  
ռայեցէք Տեառն ուրախութեամբ:

Մտէք առաջի նորա ցնծութեամբ. ծաներո՞ւք  
զի նա է Տէր Աստուած մեր:

Նա արար գմեղ՝ եւ ոչ մեք էաք. մեք ժողո-  
վուրդք եւ խաշն արօտի նորա:

Մտէք ընդ գրուես նորա խոստովանութեամբ,  
եւ օրհնութեամբ ի յարկս նորա:

Խոստովան եղերո՞ւք Տեառն, եւ օրհնեցէք զա-  
նուն նորա:

Գաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նո-  
րա. յազգէ մինչեւ յազգէ ճշմարտութիւն նորա:  
Փառք Հօր: Այժմ՝ եւ միշտ:

(Սբ.):— Սուրբ Եկեղեցեաւս աղաչեցուք զՏէր, զի  
ստիւաւ փրկեցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուցէ շնորհիւ ո-  
ղորմու:

(Բհ.):— Իմէջ տաճարիս՝ եւ առաջի  
աստուածընկալ եւ պայծառացեալ նըշա-  
նացս եւ սուրբ տեղոյս խոնարհեալ եր-  
կիւղիւ երկիրպագանեմք, զսուրբ՝ զՏրա-  
շալի եւ զյաղթող զՏէրութիւնդ. քո փա-  
ռաւորեմք, եւ քեզ մատուցանեմք զօրհ-  
նութիւնս եւ զփառս ընդ Հօր եւ ընդ  
Հօգւոյդ սրբոյ, այժմ՝ եւ միշտ եւ:

Գահանայն սաղմոսեալ ընդ Նախասարկաւառէն, ընդ Տեօփ-  
սային աստիճանն եցէ ի բեմն առաջի սեղանոյն:

(Բհ.):— Մտից առաջի սեղանոյ Աս-  
տուծոյ առ Աստուած՝ որ ուրախ աունէ  
զմանկութիւն իմ:

Նախասարկաւառն.— փոս:

Դատ արա՛ ինձ Աստուած, եւ իրաւ արա՛ ինձ ի  
զատաստանի իմում:

(Բհ.):— Յազգէ որ ոչ է սուրբ, ի մարդոյ մե-  
ղաւորէ նենգաւորէ փրկեան զիս:

(Սբ.):— Դու Աստուած հօրիչ իմ ես, ընդէր  
մոռացար զիս. ընդէր արտում գնամ ես ի նե-  
ղել թշնամոյ իմոյ:

Առաքեա՛ Տէր զոյս քո եւ զճշմարտութիւն  
քո. զի առաջնորդեցցեն ինձ, եւ հանցեն զիս ի  
լեռան սուրբ եւ ի յարկս քո:

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ առ Աստուած՝  
որ ուրախ աունէ զմանկութիւն իմ:

Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ Աստուած  
Աստուած իմ:

Արդ ընդէր արտում ես անձն իմ. կամ ընդէր  
խառնեց զիս. յուսա առ Աստուած, խոստովանեա՛  
նմա. փրկիչ երեսաց իմոց Աստուած է:

(Բհ.):— Փառք Հօր եւ:

(Սբ.):— Այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեան  
յաւիտենից: Ամէն: Եւ ևս խաղաղութեան զՏէր աղա-  
չեցուք. Օրհնեցուք զՀայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-  
տոսի, որ արժանի արար զմեզ կալ ի տեղոջս փառաբա-  
նութեան եւ երկել զերգս հոգեորս. ամենակալ Տէր Աս-  
տուած մեր կեցուցէ եւ ողորմեցի:

(Բհ.):— Ի յարկի քում սրբութեան  
եւ իտեղևոյ փառաբանութեան, հրեշ-  
տակաց բնակարանիս եւ մարդկան քա-  
ւարանիս, առաջի աստուածընկալ եւ  
պայծառացեալ նշանացս եւ սուրբ սե-  
ղանոյս խոնարհեալ երկիրպագանեմք. զսուրբ եւ զՏրաշալի  
թիւնդ քո օրհնեմք եւ փառաւորեմք.  
Եւ քեզ ընդ երկնային զօրան մատուցա-  
նեմք զօրհնութիւնս եւ զփառս ընդ Հօր  
եւ ընդ Հօգւոյդ սրբոյ, այժմ՝ եւ միշտ  
եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եթէ Եպիսկոպոս եցէ խորհրդածուն՝ տօցէ ի վերայ ամաց  
զպատուական Եմիլիոսն, եւ իծունի անկեալ առաջի սեղա-  
նոյն՝ յորդաստ արատուօք ասացէ ի Տեառն զաղօթս առ սուրբ  
Հոգին անորինչ քորհնել եւ յաղօթել Եպիսկոպոսն, դպիք եր-  
դեցցեն զԲարեան:

ԱՂՕԹՔ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ.

Մենակալ բարերար մարդասէր Աս-  
տուած բոլորից, յօրինող երևութից եւ  
աներևութից, փրկող եւ հաստատող,  
ինամոռ եւ խաղաղարար Հօր հօր Հո-  
գի, հայցեմք բազկատարած մաղթանաց  
զոչմամբ հեծութեան յանդիման եղեալ  
քեզ ահաւորիդ: Մատչեմք մեծաւ դո-  
ղութեամբ՝ սաստիկ երկիրպիւ մատու-  
ցանել նախ զբանականս զայս պատա-

րագ՝ քում անդնին զօրութեանդ՝ ի-  
բրր աթոռակցի՝ փառակցի եւ արար-  
չակցի հայրենի անկապուտ պատուոյդ,  
եւ քննողի ծածկութեան խորոց խոր-  
հրդոց ամենակատար կամաց Հօրդ Լճ-  
մանուէլի՝ զքեզ առաքչի՝ փրկչի եւ կեն-  
դանատուի եւ արարչի ամենայնի: Ի ձե-  
ռն քո ծանուցաւ մեզ երբեակ անձ-  
նաւորութիւն միանական Աստուածու-  
թեանդ, յորոց մի եւ դու ճանաչիս ան-  
հաս: Բեւ եւ ի ձեռն քո առաջնք զնա-  
հապետական տոհմին շառաւիղք՝ տե-  
սանողք անուանակոչեալք, զանցեալսն  
եւ զգալոցսն, զեղեալսն եւ զոչ գոյացեալ-  
սն անստուերաբար բարբառով բանի  
վերապատմեցին: Ազի Աստուծոյ քարոզ-  
եալ զքեզ Մովսիսի, որ ի գնալն քո  
ի վերայ ջրոցն անպարագիր զօրութիւն,  
ահեղ շրջարկութեամբ տածողականաւ,  
թեապարիակ պաշտպանողօրէն զթա-  
սիրեալ ի ճնունդս նորոգս՝ զաւազանին  
խորհուրդ ծանուցեր: Յոր կերպարան  
օրինակութեան՝ նախ քան զկառուցա-  
նել զլոյծդ մածուած վերջում վարա-  
գուրիդ՝ յօրինեցեր կարող տիրապէս բզ-  
բովանդակ բնութիւնս ամենից բնաւից  
բոլորից գոյից ամենայն էից՝ յանէից:  
Բեւ ստեղծանին ի նորոգութիւն յա-  
րութեան ամենայն եղեալքս առ ի քէն՝  
յայնմ ժամանակի, որ է օր վերջին՝  
այսմ կենցաղի, եւ օր առաջին՝ երկրին  
կենդանեաց: Բեզ հնազանդեցաւ միու-  
թեամբ կամացն՝ որպէս Հօրն իւրում,  
ազգակիցն քո՝ էակիցն Հօր՝ անդրա-  
նիկն Արդի մերովս կերպիւ, զքեզ աւե-  
տարանեաց ճշմարիտ Աստուած հաւա-  
սար եւ համազոյ Հօր իւր հօրի, եւ զառ  
ի քեզ հայհոյութիւնն անբաւելի քա-  
րոզեաց, եւ իբր զաստուածամարտից  
զքո հետեւոցն՝ Հարաբանական բերանս  
կարկեաց. եւ զելնն շնորհեաց արդարն  
եւ անարատն՝ գտիչն ամենայնի, որ վասն

մեղաց մերոց մատնեցաւ, եւ յարեալ  
վասն զմեզ արդարացուցանելոյ: Նմա  
փառք ի ձեռն քո, եւ քեզ բարեբանու-  
թիւն ընդ Հօր ամենակալի յաւիտեանս  
յաւիտենից. ամէն:

(ԴԱՐՉԵԱԼ ՆԱՐԻՆ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ).

Մղաչեմք եւ աղերսեմք արտասուակից  
հառաչմամբ յամենայն անձնէ՝ զփառա-  
ւորեալ արարչութիւնդ՝ անեղծ եւ անըս-  
տեղծ անժամանակ Հոգւոյդ զթածի,  
որ բարեխօսդ ես վասն մեր յանմուռնչ  
հեծութիւնս՝ առ ողորմածդ Հայր, որ  
զսուրբսն պահես, եւ զմեղուցեալս մաք-  
րես եւ տաճարս կազմես կենդանի եւ  
կեցուցիչ կամաց բարձրելոյդ Հօր: Երդ  
ազատեա՛ զմեզ յամենայն անմաքուր  
գործոց, որ ոչ է հաճոյ քումդ բնա-  
կութեան, եւ մի՛ շիջիսն առ ի մենջ՝  
լուսոյդ շնորհաց փայլմունք ի տեսակա-  
նացս աչաց իմաստից, վասն զի զքեզ  
ուսաք միանալ ի մեզ ի ձեռն աղօթից  
եւ ընտիր վարուց խնկելոց: Եւ քանզի  
մինդ յարորդութենէդ պատարագի,  
եւ միւսդ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ  
հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ,  
իսկ դու ընկալցիս զմեր պաղատանս,  
եւ յարդարեցես զմեզ օթեանս պա-  
տուականս ամենայն պատրաստութեամբ  
ի վայելումն ճաշակման երկնաւոր դա-  
ռինդ, առանց պատժոց դատաւար-  
տութեան ընդունել զայս անմահացու-  
ցիչ մանանայս կենաց նորոյ փրկու-  
թեան: Եւ հալեցի ի հոյս յայսմանէ  
զայթակղութիւնս մեր, որպէս մար-  
գարէին կենդանախարոյկ կայծակամբն՝  
ի ձեռն ունելեացն մատուցման, զի յա-  
մենայնի քոյդ քարոզեցի զթութիւն,  
որպէս Արդւովդ Աստուծոյ Հօր քաղց-  
րութիւն, որ զանառակ որդին մերձե-  
ցոյց ի հայրենի ժառանգութիւնն, եւ  
զպոռնիկսն յառաջեցոյց յերկնային ար-



քայութիւնն՝ արդարոցն երանութեան: Այո՛, այո՛, և ես մի եմ ի նոցանէ, և զիս ընկալ ընդ նոսին իբր մարդասիրութեան կարօտեալ մեծի, շնորհօք քո ապրեալ, զարեամբ Քրիստոսի ստացեալս: Չի յայտմ ամենայնի յամենայնում ծանիցի քո աստուածութիւնը՝ ընդ Հօր փառաւորեալ համապատուաբար ի մի կամս՝ և ի մի իշխանութիւն գովութեան:

(Սբէ. — Բարձր յայն)։ — Օրհնեալ տէր:

Եպիսկոպոսն. — ի ձայն:

Չի քո է գթութիւն և կարողութիւն, մարդասիրութիւն, զօրութիւն և փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ապա փակեցի վարդապետն:

Դպիրն երգեսցեն զՄեղիքի:

Պատարագին զնացեալ ի խորհրդանոցն, և հախաարկաւազն մատուցէ զնշխարն ասելով.

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչես:

Չոր առեալ Քաջանայն ի ձեռս, ասացէ:

Օրհնութիւն և փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ այժմ եւ:

Եւ զիցէ ի մտղմոյն ասելով.

Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Որ բազմեալ հանգչի յանարուեստ աթոռ, զմահ խաչի յանձն էառ վասն ազգի մարդկան. օրհնեցէք, գովեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան:

Եւ ապա մատուցէ հախաարկաւազն զգինին ասելով.

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչես:

Չոր առեալ Քաջանայն, ասացէ:

Օրհնութիւն և փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբ:

Եւ հեղցէ զգինին խաչանիշ ի սկիհն ասելով.

Յաղագս յիշատակի փրկագործ անօրէնութեան Տեառն Աստուծոյ եւ

Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի: Որ ի կողահոս արեան աղբերէն նորոգեցան արարածք եւ անմահացան. օրհնեցէք, գովեցէք եւ բարձր արարէք զնա յաւիտեան:

Առեալ Քաջանայն ի ձեռս զմտղմոյն հանդերձ Նշխարուն ասացէ ի ծածակ զաղօթս Յովհաննու Ոսկեբերանին:

Տէր Աստուած մեր, որ զերկնաւոր հացդ զՏէրն մեր Յիսուս Քրիստոս զկերակուրդ ամենայն աշխարհի առաքեցեր փրկիչ եւ կեցողիչ եւ բարերար, օրհնել եւ սրբել զմեզ. ինքնին դու Տէր օրհնեալ եւ այժմ զառաջադրութիւնս զայս:

(Գեղցէ զմտղմոյն հանդերձ Նշխարուն ի վերայ Սկիհն ասելով):

Ընկալ զսա յերկնային քո սեղանդ: Յիշեա որպէս բարերար եւ մարդասէր ըզմատուցողս եւ վասն որոց մատուցանի: Եւ զմեզ անդատապարտ պահեա ի քահանայադործութիւն աստուածային խորհրդոց քոց. զի սուրբ եւ փառաւոր է ամենապատիւ մեծ վայելութիւն փառացդ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ այժմ եւ:

Եւ որպէսցէ Քաջանայն զսկիհն ասելով ընդ Սարկաւազին տուն առ տուն. (Սարգիս Ղ.Բ.):

Այելուիս այելուիս.

(Բհ.)։ — Տէր թագաւորեաց, վայելչութիւն զգեցաւ. զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր էած:

(Սբէ.)։ — Հաստատեաց զաշխարհ զի մի օսանեացի. պատրաստ է աթոռ քո ի սկզբանէ յաւիտեանս դու ես:

Ամբարձան գեաք Տէր՝ եւ ամբարձին գեաք զձայնս ի բեանց. եւ յարկեցն գեաք ի գնացս իւրեանց:

Ի ձայնէ ջուրոց բաղմաց սքանչելի եղին զքօսանք ծոյժ:

Սքանչելի ես դու Տէր ի բարձունս. վկայութեանց քոց մեք յոյժ հաւատացաք:

Տան քում վայելէ սրբութիւն Տէր ընդ երկայն աւուրս:

(Բհ.)։ — Փառք Հօր եւ Որդւոյ:

(Սբէ.)։ — Ս. յժմ եւ միշտ եւ յաւ:

Սարկաւազն մեզմ ձայնիւ. երբցս:

Օրհնեալ տէր:

Քաջանայն խաչակրեացէ ի վերայ սկիհն ասելով. երբցս:

Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ եւ զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո:

Հախաարկաւազն բերցէ զաւուրաւ, եւ քաջանայն արկցէ ըզխաւի եւ առ Սկիհն ինկարկելով ասացէ:

Խուճկ մատուցանեմ առաջի քո Քրիստոս բուրումն հոգեւորական: Ընկալ ի սուրբ յերկնային եւ յիմանալի քո մատուցարանդ ի հոտ անու-

շից: Առաքեալ առ մեզ փոխարէն զՆորհս եւ զպարգեւս Հոգւոյդ սրբոյ. եւ քեզ մատուցանեմք զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտ:

Բացցի վարդապետն, եւ զպիրք սկանիցին զարկան ինկոյն «Ռարեհոսութեամբ» մինչ նոցա երգեն, Քաջանայն՝ առաջի իւր ունելով զնախասարկաւազն՝ որ ունիցի խաչ եւ մտ ի ձեռսն՝ շուրջ դարձցի զուրբ սեղանոյն, եւ եկեալ ինկարկեացէ առաջի սեղանոյն, եւ իջէ ի վայր ընդ հիւսիսային աստիճանս բեմին, եւ զընցակիրքն զնն նորա, եւ ինկարկեալ որոց եցին ի դասս՝ ելցէ ի բեմն ընդ հարաւային աստիճանս խաչ եթէ թափօր լինցի, դըսկըն երգելով «Ղրարեհոսութեամբ» մտցին ի մէջ ժողովուրդեան ի հիւսիսայ կողմանէ, եւ Քաջանայն հանդերձ սարկաւազօք զնն նոցա ինկարկելով առ ժողովուրդն շուրջանակի, մինչեւ եկեալ մտցեն ի ձախաարկաւազն դասն: Հախաարկաւազն կացցէ առաջի բեմին, եւ Քաջանայն հանդերձ զընցակիրք ելցէ ի վեր ընդ հարաւային աստիճանն, եւ ինկարկեալ երկրպագեացէ սուրբ սեղանոյն: Սարկաւազն առեալ զաւուրաւն ի Քաջանայն, սացէ նախասարկաւազին որ կայ առաջի բեմին յատենն, եւ առեալ ի նմանէ դասն իցէ յաստիճան սեղանոյն:

ՕՐԻՆՆԻՐ

ՍՐԲՈՑ ՓՆՏԱՐԱԳԻ

Յաւալտ շարտիմն ինկոյն ասացէ հախաարկաւազն:

Օրհնեալ տէր:

Քաջանայն ի ձայն:

Օրհնեալ թագաւորութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ այժմ եւ միշտ եւ յա:

Դպիրն ասացին յամմուտ ըստ պատշաճի աւուրն եւ ապա հախաարկաւազն:

Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ կեցո և ողորմեա. Օրհնեալ տէր:

Քաջանայն ի ձայն:

Օրհնութիւն և փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ այժմ եւ:

Խաղաղութիւն ամենեցուն:

(Գպիրքն)։ — Եւ ընդ հոգւոյդ քում:

(Երբեք)։ — Աստուծոյ երկրպագեացուք:

(Գպ.)։ — Առաջի քո Տէր:

Հախաարկաւազն ելցէ ի վեր ի բեմն:

Քաջանայն ի ձայն:

Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքննին է եւ փառքդ անհասանելի, որոյ ողորմութիւնդ անչափ է, եւ գթութիւնդ անբաւ: Դու ըստ առատ մարդասիրութեանդ քում նայեանց ի ժողովուրդս քո եւ ի տաճարս յայս սուրբ: Եւ արան ընդ մեզ եւ ընդ աղօթակիցս մեր առատապէս զողորմութիւն քո եւ զգթութիւն: Չի քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ:

Եւ սասանցն զպիւրն զճարտ սողմս եւ զշարական ըստ աւուր պատշաճի. եւ յերգեհն նոցա, Քաջանայն սասանց զաղօթս ի ծածուկ:

Տէր Աստուած մեր, կեցն զժողովուրդս քո, եւ օրհնեան զժառանգութիւնս քո, զլրումն եկեղեցւոյ քո պահեան. սրբեան զսոսա որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քո: Դու զմեզ փառաւորեան սաստուածային զօրութեամբ քով, եւ մի թողոր զյուսացեալսս ի քեզ: Զի քո է կարողութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

Որ հասարակաց զայս եւ միաձայն մեզ ամենեցուն ուսուցեր աղօթել, եւ զերկուց եւ զերից միաձայնելոց յանուն քո զխնդրուածս պարգեւել խոստացոր: Դու եւ այժմ զժառանգից քոց խնդրուածս առ ի յօգուտն կատարեան, շնորհելով մեզ յայսմ յաւիտենիս զգիտութիւն քումիւ ճշմարտութեան, եւ ի հանդերձեալն զկեանսն յաւիտենականս պարգեւելով: Զի բարերար եւ մարդասէր ես Աստուած, եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ:

Եւ ի վերջն տան շարականն՝ Քաջանայն երկրպագելով սեղանոցն՝ սուցե զսուրբ աւետարանն ի ձեռս, եւ սասանց զաղօթս զայս ի ծածուկ:

Տէր Աստուած մեր, որ կարգեցեր յերկինս զդասս եւ զգինուորութիւնս հրեշտակաց եւ հրեշտակապետաց ի սպասաւորութիւն փառաց քոց: Արան եւ այժմ ընդ մուտս մեր մտանել եւ սրբոց հրեշտակաց, եւ լինել պաշտօնակից մեզ եւ փառաբանակից քում բարերարութեանդ:

(Մի.) : — Օրհնեան տեր:

Քաջանայն ի ձայն:

Զի քո է կարողութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Նախասարկուազն գոչեցէ բարձր ձայնիւ:

Պաօսխումէ:

(Գ.պ.) : — Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր:

Եւ Քաջանայն համբուրելով զսուրբ աւետարանն սուցե սարկուազին. որ բարձրացուցեալ վերաբերեցէ շուրջ զսեղանովն ի հետինոց ընդ հարան: Եւ ի վերաբերին՝ Քաջանայն սասանց զաղօթս ի ծածուկ:

Աստուած սուրբ, որ ի սուրբս հանգուցեալ ես, եւ երեքսրբեան ձայնիւ սերովբէք գովեն զքեզ՝ եւ քերովբէք փառաբանեն, եւ ամենայն երկնային զօրութիւնք քեզ երկիր պագանեն: Որ ի չգոյէ ի գոյ ածեր զամենայն արարածս. որ արարեր զմարդն ըստ պատկերի քում եւ նրմանութեան, եւ ամենայն շնորհիւ քով զնա զարդարեցեր եւ ուսուցեր խնդրել զիմաստութիւն եւ զգօնութիւն: Եւ ոչ անտես արարեր զմեզ զուցեալն, այլ եզեր ի վերայ նորա ապաշխարութիւն փրկութեան: Որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալ եւ զանարժան ծառայքս քո ի ժամուս յայսմիկ, կալ առաջի փառաց սրբութեան: սեղանոց քո, եւ զօրինաւոր պաշտօն, զերկրպագութիւն եւ զփառաբանութիւն մատուցանել Քեզ: Դու Տէր, ընկալ ի բերանոց մեղաւորացս զերեքսրբեան օրհնութիւնս, եւ պահեան զմեզ քոյին քաղցրութեամբդ. թող մեզ զամենայն յանցանս մեր զկամայ եւ զակամայ: Սրբեան զհոգի եւ զմիտս մեր, եւ շնորհեան սրբութեամբ պաշտել զքեզ զամենայն աւուրս կենաց մերոց, բարեխօսութեամբ սրբուհւոյ

Աստուածածնին եւ ամենայն սրբոց քոց՝ որք յաւիտենից քեզ հաճոյացան: Զի սուրբ ես Տէր Աստուած մեր, եւ քեզ վայելէ փառք՝ իշխանութիւն եւ պատիւ այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի:

Եւ յաւորտ երեքսրբեանն, սարկուազն քորոզեցէ: Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչես: Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի: Վասն ամենայն սուրբ եւ ուղղափառ երկրի: Վասն Հայրապետին մերոյ Տեառն: Վասն վարդապետաց. քահանայից: Վասն հոգւոցն հանգու: Եւ ևս միաբան վասն ճշմարտ: Չանձինս մեր եւ զմիմեանս: Ողորմաց մեզ Տէր Աստուած մեր:

Գպիւրն սասանցն Տէր սրբեան, Յիշու Տէր, եւն:

Եւ Քաջանայն բազկտարած սասանց զաղօթս ի ծածուկ:

Տէր Աստուած մեր, զբազկատարած զաղաչանս ծառայից քոց վերջնակցիս, եւ ողորմեսցիս ըստ մեծի ողորմութեան քում: Զգթութիւն քո առաքեան ի վերայ մեր եւ ամենայն ժողովրդեանս՝ որք ակն ունին առ ի քէն առատ ողորմութեանդ:

(Մի.) : — Օրհնեան տեր:

(Բ.հ. — Ե յայն.) : — Զի ողորմած եւ մարդասէր ես Աստուած գոլով, եւ քեզ վայելէ փառք՝ իշխանութիւն եւ պատիւ այժմ՝ եւ միշտ եւ յա:

Յետ այսորիկ պատարագին, եթէ իցէ Եպիսկոպոս եւ առաջնորդ վիճակի, երկրպագեցէ սեղանոցն եւ եկեալ բազմեսցի յաթուռն: Գպիւր ըստ խորհրդոյ սուրբ ընթերցին զմարգարէական եւ զառաքելական զգիրտ: Եւ սպա Աբեղի, սաղմս ըստ ցուցանելոյ ընթերցուածոցն:

(Եր.) : — Օրթի:

Պատարագին խաղաղեցէ ի վերայ ժողովրդեան ստեղծ:

Խաղաղութիւն ամենեցուն:

(Գ.պ.) : — Եւ ընդ հոգւոյդ քում:

(Եր.) : — Երկիւղածութեամբ լուարուք:

(Սարկուազն դառնալով առ ժողովուրդն.) Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ:

(Գ.պ.) : — Փառք քեզ Տէր Աստուած մեր: (Եր.) : — Պաօսխումէ: (Գ.պ.) : — Ասէ Աստուած:

Սարկուազն ընթերցցի զԱւետարանն սուրբ, եւ յաւորտմանն, գպիւր սասանցն եղանակաւ:

Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Սարկուազն դարձցի յարեւելս եւ բարձրացուցեալ ի վեր գտուր աւետարանն, սասանց զՆիկիական դաւանութիւնն:

Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն ամենակալ, յարարին երկնի եւ երկրի, երևելեաց եւ աներևութից: Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդին Աստուծոյ ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն յեութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ՝ լոյս ի լուսոյ՝ Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ոչ արարած:

Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս՝ եւ ի վերայ երկրի, երևելեք եւ աներևոյթք: Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկինց, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ Հոգւովն սրբով:

Որով էառ մարմին, հոգի եւ միտք եւ զամենայն որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս եւ ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնով նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ի գատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի սուրբ Հոգին յանդն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յաւետարանս: Որ էջն ի յորդանան, քարոզեաց զառաքեալն եւ ընակեցաւ ի սուրբան:

Հաւատամք եւ ի միմիայն ընդհանրական եւ առաքելական Եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քա-

ութիւն և ի թողութիւն մեղաց, ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարբայութիւնն երկնից և ի կեանն յաւիտենականս:

Իսկ որք ասեն՝ էր երբեմն՝ յորժամ ոչ էր Որդին, կամ էր երբեմն՝ յորժամ ոչ էր սուրբ Հոգին, կամ թէ՛ յոչ էից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Կստուծոյ և կամ զսուրբ Հոգին, և թէ՛ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նշովէ կաթողիկէ և առաքելական սուրբ Եկեղեցի:

(Նիւրի):— Օրհնեա տէր:

Քահանայն համբարեցէ զաւետարանն եւ ասացէ ի ձայն (զստացեալն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի):

Իսկ մեք փառաւորեցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկիր պագանելով սրբոյ Երրորդութեան եւ միոյ Աստուածութեան Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ այժմ եւ:

(Սբի):— Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչես:

(Ղոյ):— Տէր ողորմես:

(Սբի):— Եւ ևս հաւատով աղաչեցուք և խնդրեցուք ի Տեառնէ Աստուծոյ և ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ի ժամուս պաշտամանն և ազօժից. զի արժանի ընդունելութեան արասցէ լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց, ընկալցի զխնդրուածս սրտից մերոց, թողցէ զյանցանս մեր, ողորմեցի ի վերայ մեր, Ազօժք մեր և խնդրուածք յամենայն ժամ մտցն առաջի մեծի Տէրութեան նորս, և նա տացէ մեզ միաբան միով հաւատով և արդարութեամբ վաստակել ի գործս բարեաց. զի զոգորմութեան զշնորհս իւր արասցէ ի վերայ մեր Տէրն ամենակալ, կեցուցէ և ողորմեցի:

(Ղոյ):— Կեցո՛ Տէր:

(Սբի):— Զժամս սուրբ Պատարալիս և զաստ. ԶՏրբնալ խաղա: Զբաւութիւն և զթողութ. Զսրբոյ Խաչին: Եւ ևս միա. Զանձինս մեր: Ողորմեաց:

(Ղոյ):— Ենորհեա Տէր. Տէր ողորմես. Քեզ տեսանդ Եւ:

Ինչ նորա երգեն. Քահանայն ասացէ զօրհն ի ծածուկ:

Տէր մեր եւ փրկիչ Յիսուս Քրիստոս, որ մեծդ ես ողորմութեամբ, եւ առատ պարգեւօք բարերարութեան քո: Որ դու քոյին կամաւ ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց խաչի եւ մահու յաղագս մեղաց մերոց, եւ պարգեւեցեր առատապէս զպարգեւս Հոգւոյդ սրբոյ երանելի առաքելոցն: Հաղորդս արն եւ զմեզ Տէր, աղաչեմք զքեզ՝ աստուածային պարգեւացդ, թողութեան մեղաց եւ ընդունելութեան Հոգւոյդ սրբոյ:

(Սբի):— Օրհնեա տէր:

Քահանայն, ի ձայն:

Որպէս զի արժանաւոր եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտ:

Խաղաղութիւն ամենեցուն:

(Ղոյ):— Եւ ընդ հոգւոյդ քում:

(Սբի):— Աստուծոյ երկրպագեցուք:

(Ղոյ):— Առաջի քո տէր:

Քահանայն, ի ձայն:

Խաղաղութեամբ քով Քրիստոս Փրկիչ մեր, որ ի վեր է քան զամենայն միտս եւ զբանս, ամրացն զմեզ եւ աներկիւղ պահեա յամենայն չարէ. հաւասարեան զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո՝ որք հոգւով եւ ճշմարտութեամբ քեզ երկիրպագանեն. վասն զի ամենասուրբ Երրորդութեանդ վայելէ փառք՝ իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

(Սբի):— Օրհնեա տէր:

Քահանայն, ի ձայն:

Տէր Աստուած՝ օրհնեցէ զամենեսեան:

(Ղոյ):— Ամէն:

Քահանայն հանցէ զայլոն. իսկ եթէ Եպիսկոպոս կցէ՝ զթագն եւ զեմբարն:

(Սբի):— Մի՛ որ յերկայից, մի՛ որ ի թերահաւատից, և մի՛ որ յապաշխարողաց և յանմարտից մերձեացի յաստուածային խորհուրդս:

(Ղոյ):— Մարմին տերունական և արիւն փրկչոս:

(Սբի):— Սաղմնս ասացէք Տեառն Աստուծոյ մերում Պալիւք ձայնի. քաղցրութեամբ զերգս հոգեորս:

(Ղոյ):— Սրբասացութիւն ըստ աւուրն պատշաճի:

Սարկաւազն վերաբերեցէ ի խորհրդանոցէն զսուրբալ հացն եւ զգինն առ քահանայն:

Իսկ մինչ զպիղքն երգեն՝ Քահանայն խոնարհեցուցեալ զգլուխն աւաթի ոտը սեղանոյն աղօթեցէ ի ծածուկ:

Ոչ որ արժանի է յըմբռնելոցս մարմնաւոր ակտիւք եւ ցանկութեամբ՝ մատչել ի սեղան քո, կամ սպասաւորել արքունական փառաց քոց: Քանզի պաշտել զքեզ մեծ եւ ահաւոր՝ երկնաւոր զօրութեանցդ իսկ է, սակայն վասն անչափ բարերարութեան քո՝ անպարագրելի Քանդ Հօր եղեր մարդ եւ Քահանայապետ մեր երեւեցար, եւ իբրեւ Տէր ամենեցուն՝ այսմ սպասաւորութեան եւ անարիւն զենման՝ զքահանայութիւն աւանդեցեր մեզ: Վասն զի դու ես Տէր Աստուած մեր, որ տիրես երկնաւորաց եւ երկրաւորաց: Որ ի վերայ քերովբէական ակթողոյ բազմիս, սերովբէից Տէր եւ թագաւոր խորայելի: Որ միայն սուրբ ես եւ ի սուրբս հանգուցեալ. աղաչեմ զքեզ՝ միայն բարերար եւ հեշտալուր, նայեա յիս ի մեղուցեալ եւ յանպիտան ծառայս

քո, եւ սրբեա զհոգի եւ զմիտս իմ յամենայն պղծութենէ չարին. եւ բաւականացն զիս զօրութեամբ սուրբ Հոգւոյդ, որ զգեցեալ եմ զքահանայական շնորհ, կալ առաջի սրբոյ սեղանոյս եւ քահանայապետըծել զքո անարատ մարմինդ եւ զպատուական արիւնդ: Քեզ խոնարհեցուցեալ ըզպարանոցս իմ՝ մաղթեմ, մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, եւ մի՛ մերժեր զիս ի ծառայից քոց. այլ արժանի արա մատուցանել քեզ զընծայս զայս յինէն ի մեղուցեալ եւ յանարժան ծառայէս քումմէ: Վասն զի դու ես որ մատուցանես եւ մատչիս եւ ընդունիս, եւ տաս Քրիստոս Աստուած մեր: Եւ քեզ փառս մատուցանեմք հանդերձ անրակիզմն քո Հարբդ եւ ամենասուրբ եւ բարերար Հոգւովդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտ:

Քահանայն խնդրելով սեղանոյն եւ սկզպն ընկալցի զընծայսն, եւ դառնալով բարձրացուցէ ի սեռ ժողովրդեան. եւ ապա գարձիկ եւ բազմեցուցէ ի սեղանն. եւ լուսացէ զմարտ մատանց ձեռաց եւրոյ՝ ասելով զմի առն սաղմոս ի ծածուկ:

Լուսից սրբութեամբ զձեռս իմ. Եւ:

(Սբի):— Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչես:

(Ղոյ):— Տէր ողորմես:

(Սբի):— Եւ ևս հաւատով և սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ, ահիւս մի՛ խղճիւ և զայլմակղութեամբ մի՛ նենգութեամբ և խորամանկութեամբ մի՛ պատրանօք և խաբէութեամբ մի՛ երկմտութեամբ և մի՛ թերահաւատութեամբ այլ ուղիղ վարուք, պարզ մտօք միամիտ սրտիւ կատարեալ հաւատով, լցեալ սիրով, լի և առաւելալ ամենայն գործովք բարութեան կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ, և գոցուք զօղորմութեան զշնորհս յաւաւր յայտնութեան և ի միւսանգամ գոյտեան Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի. կեցուցէ և ողորմեցի:

(Ղոյ):— Կեցո՛ Տէր եւ ողորմես:

Մինչ նորա քարոզեն, քահանայն բարկատարած աղօթեացէ  
ի ծածուկ:

Տէր Աստուած զօրութեանց եւ  
արարիչ ամենայն լինելութեանց, որ  
յանէութենէ զքնաւս ի ցուցակու-  
թիւն ածեալ գոյացուցեր: Որ եւ  
զմեր զհոգեղէն բնութիւնս պատուեալ  
մարդասիրապէս՝ այսպիսի ահաւոր եւ  
անպատում խորհրդոյ կարգեցեր  
սպասաւորս: Դու Տէր, որում պա-  
տարագեմք զպատարագիս՝ ընկնլ առ  
ի մէնջ զառաջադրութիւնս զայս, եւ  
աւարտեա զսա ի խորհրդականու-  
թիւն մարմնոյ եւ արեան միածնի քո,  
դեղ թողութեան մեղաց պարգեւեա  
ճաշակողացս զհացս զայս եւ  
զբաժակս:

Քահանայն բացէ կիսով չափ դժածկոց սկզբն, որպէս զի ե-  
րեւեցն սուրբ նշխարն ի վերայ մաղղմայն ըստ եղեբաց:

(Սբ.):— Օրհնեա տէր:

Քահանայն. — իճայն:

Շնորհօք եւ մարդասիրութեամբ  
Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի  
Քրիստոսի, ընդ որում քեզ Հօր՝  
միանգամայն եւ Հոգւոյդ սրբոյ վա-  
յելէ փառք իշխանութիւն եւ պա-  
տիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս  
յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

(Պ.):— Եւ ընդ հոգւոյդ քում:

(Սբ.):— Աստուծոյ երկրպագեցուք:

(Պ.):— Առաջի քո տէր:

Քահանայն փոքր ինչ հեռացեալ ի սեղանէն կացցէ ձեռնա-  
ման՝ յաջ կողմն քաղցրով ունելով դաշ իւր յնծայն, եւ Նա-  
խատարկաւորն համբուրեալ զսեղանն եւ զաջ քահանայնն ի  
ձայն բարձր ասացէ Ողջի տաք միեռաց, եւ իջեալ ընդ հեռիս-  
յին աստիճանս ասցէ զողջոյն երկրպագունք քահանայնցն բողոքոց  
առաջն բեմնն ի փոքր ատենի. իսկ երկրպագոյնն ի քահանայնց տա-  
ցէ ողջոյն յաջմէ եւ յահեղէ քահանայնցն եւ նորա միմեանց եւ  
բողոք ժողովորեան. եւ Նախատարկաւորն վերստին բարձրացի ի  
բեմն ընդ հարաւայն աստիճանն. եւ քահանայն դարձցի ի սե-  
ղան եւ սքողեաց զսկիհն:

(Պ.):— Քրիստոս ի մէջ մեր յայտնե:

(Սբ.):— Ահա կացցուք, երկրպագեալք, բարւոք  
կացցուք եւ նայեցարուք զգուշութեամբ:

(Պ.):— Առ քեզ Աստուած:

(Սբ.):— Պատարագ Քրիստոս մատչի Գառն Աստու-  
ծոյ:

(Պ.):— Ողորմութիւն եւ խաղաղութիւն եւ  
պատարագ օրհնութեան:

(Սբ.):— Օրհնեա տէր:

Քահանայն. — իճայն:

Շնորհօք, սէր եւ աստուածային  
սրբարար զօրութիւնն Հօր եւ Որդւոյ  
եւ Հոգւոյն սրբոյ, եղիցի ընդ  
ձեզ ընդ ամենեցեան:

(Պ.):— Ամէն: Եւ ընդ հոգւոյդ քում:

(Սբ.):— Զորունս՝ զգրունս՝ ամենայն իմաստութեամբ  
եւ զգուշութեամբ. ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր  
աստուածային երկրպագիւ:

(Պ.):— Ունիմք առ քեզ Տէր ամենակալ:

(Սբ.):— Եւ գոհացարուք զՏեառնէ բոլորով սրտիւ:

(Պ.):— Արժան եւ իրաւ:

Մինչ նորա երգեն, քահանայն ձեռնամտ աղօթեացէ ի ծա-  
ծուկ:

Արժան է ստուգապէս եւ իրաւ՝  
ամենայնորդոր փութով միշտ երկիր  
պագանելով փառաւորել զքեզ Հայր  
ամենակալ: Որ քոյին անընեղի եւ  
արարչակից բանիւդ զանիծիցն բար-  
ձեր գերձիմն: Որ ժողովուրդ ինք-  
եան առեալ զեկեղեցի սեպհական-  
եաց զհաւատացեալս ի քեզ: Եւ  
զնեղի բնութեամբ ըստ ի կուսէն  
անտեսութեան հաճեցաւ բնակիլ  
ի մեզ: Եւ նորագործ աստուածապէս  
ճարտարապետեալ՝ զերկիրս երկին  
արար: Վասն զի որում ոչն հան-  
դուրժէին առաջի կալ զուարթնոցն  
ջոկք՝ զարհուրեալք ի փայլակնացայտ  
եւ յանմատոց լուսոյ աստուածու-  
թեանդ, եղեալ այդպիսիւ մարդ-  
յաղագս մերոյ փրկութեան, շնոր-

հեաց մեզ ընդ երկնայինն պարել  
զհոգեղէն պարս:

(Սբ.):— Օրհնեա տէր:

Քահանայն. — իճայն:

Եւ ընդ սերովբէսն եւ ընդ քե-  
րովբէսն միաձայն սրբասացութեամբ  
յօրինել նուագս, եւ համարձակա-  
պէս գոչելով աղաղակել ընդ նոսին  
եւ ասել:

(Պ.):— Սուրբ՝ Սուրբ՝ Սուրբ Տէր զօրու-  
թեանց, լի են երկինք եւ երկիր փա:

Մինչ նորա երգեն, քահանայն բարկատարած աղօթեացէ ի  
ծածուկ:

Սուրբ՝ սուրբ՝ սուրբ ես ճշմարտա-  
պէս եւ ամենասուրբ, եւ ո՞վ ոք  
պանծասցի բովանդակել բանիւ զքո  
ի մեզ զանբաւ բարեգործութեանդ  
զեղմունս: Որ եւ անդէն իսկ ի նախ-  
նումն զանկեալն ընդ մեզօք զանա-  
ղան եղանակօք խնամեալ սփոփեցեր,  
մարգարէիւք՝ օրինացն սուշութեամբ՝  
քահանայութեամբ եւ ստուերակերպ  
երնջուցն մատուցմամբ: Իսկ ի վախ-  
ճան աւուրցս այսոցիկ՝ զբովանդակ  
իսկ զպարտեաց մերոց խղեալ զդա-  
տակնիք՝ ետուր մեզ զորդիդ քո  
միածին՝ պարտապան եւ պարտոս,  
զենումն եւ օծեալ, գառն եւ երկ-  
նաւոր հաց, քահանայապետ եւ պա-  
տարագ: Վասն զի ինքն է բաշ-  
խող, եւ նոյն ինքնդ բաշխի ի միջի  
մերում միշտ անծախսապէս: Վասն  
զի եղեալ հաւաստեալ եւ առանց  
ցնորից մարդ, եւ անշփոթ միաւո-  
րութեամբ մարմնացեալ յԱստուա-  
ծածնէն եւ ի սուրբ կուսէն Մարիա-

մայ, ճանապարհորդեաց ընդ ամե-  
նայն կիրս մարդկային կենցաղոցս ա-  
ռանց մեղաց: Եւ յաշխարհակեցոյց  
եւ յառիթն փրկութեան մերոյ եկ-  
եալ կամաւ ի խաչն,

(Քահանայն երկրպագեալ սեղանոյն բացէ զսկիհն եւ ասցէ  
զնուկեալ հացն ի ձեռս իւր եւ ասացէ.)

առեալ զհացն ի սուրբ՝ յաստուա-  
ծային՝ յանմաճ՝ յանարատ եւ յա-  
բարչադործ իճեռս իւր՝ օրհ-  
նեաց՝ գոհացաւ՝ երեկ՝ ետ իւրոց  
ընտրեալ սուրբ եւ բազմեալ աշա-  
կերտացն ասելով:

(Սբ.):— Օրհնեա տէր:

Քահանայն. — զուրբ հացն մատուցք երկուց ձեռացն ըմբ-  
նեալ ասացէ ի ձայն:

Առէք կերէք, ԱՅՍ Է ՄԱՐՄԻՆ  
ԻՄ, որ վասն ձեր եւ բազմաց բաշ-  
խի ի քաւութիւն եւ ի թողութիւն  
մեղաց:

(Պ.):— Ամէն:

Քահանայն զուրբ մարմինն մաղղմայն երեալ ի վերայ սեղա-  
նոյն, եւ առեալ ի ձեռս իւր զսկիհն ասացէ ի ծածուկ:

Նոյնպէս եւ զբաժակն առեալ,  
օրհնեաց՝ գոհացաւ՝ էարբ՝ ետ  
իւրոց ընտրեալ սուրբ եւ բազմեալ  
աշակերտացն ասելով:

(Սբ.):— Օրհնեա տէր:

Քահանայն երկու ձեռամբ փոքր ինչ ի սեղանոյն վերացուց-  
եալ զսկիհն ասացէ ի ձայն:

Արբէք ի սմանէ ամենեքեան, ԱՅՍ  
Է ԱՐԻԻՆ ԻՄ ՆՈՐՈՅ ՈՒԻՏԻ, որ  
յաղագս ձեր եւ բազմաց հեղանի  
ի քաւութիւն եւ ի թողութիւն մե-  
ղաց:

(Պ.):— Ամէն, Հայր երկնաւոր, որ զորդիդ:

Քաջանայն եղեալ զմաղղմայն ի վերայ սկզնն արդեացէ, եւ կալեալ զսկիզն երկրորդն ձեռք, ասացէ ի ծածուկ:

Եւ զսոյն միշտ իւր յիշատակ առնել պատուիրանն աւանդեաց մեզ բարերար Որդիդ քո միածին, եւ իջեալ ի ստորին վայրս մահու մարմնովն զոր ի մերմէս ընկալաւ յազգակցութենէ, եւ զնիգս դժոխոցն աղարտեալ հղօրեղապէս, զքեզ միայն ծանոց մեզ՝ ճշմարտ Աստուած, զԱստուածդ կենդանեաց եւ մեռելոց:

Եւ արդ մեք Տէր՝ ըստ այսմ հրամանատրութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ եւ արեան միածնի քո, յիշեմք զդորա որ վասն մեր զփրկագործ չարչարանան, զկենսատու Խաչելութիւնն, զերեքօրեայ Թաղումնն, զերանելի Յարութիւնն, զաստուածապէս Համբարձումնն, զնստելն ընդ աջմէ քո Հայր, զաչաւոր եւ զփառաւորեալ զմիւսանգամ Քալուսան խոստովանիմք եւ օրհնեմք:

(Սբէ.):— Օրհնեա տէր:

Քաջանայն. — զուրբ խորհուրդն վերացուցեալ ի սեղանոյն սակաւ ինչ, մատուցէ առ Հայր ասելով ի ձայն:

Եւ զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք ըստ ամենայնի՝ եւ յաղագս ամենեցուն:

(Ղ. Կ.):— Յամենայնի օրհնեալ ես Տէր:

Մինչ նոքս երգեն՝ Քաջանայն զուրբ խորհուրդն եղեալ ի վերայ սեղանոյն, բազկատարած աղօթեացէ ի ծածուկ:

Զքեզ արդարեւ Տէր Աստուած մեր գովեմք, եւ զքէն գոհանամք հանապազ, որ զանց արարեր զմերով անարժանութեամբս, այսպիսի

աչաւոր եւ անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս, ոչ յաղագս մերոց ինչ բարեգործութեանց, յորոց յոյժ թափուր եմք եւ միշտ ունայն գտանիմք հանապազ, այլ ի քո բազմազեղ ներողութիւնդ ցանգ ապակինեալ՝ համարձակիմք մերձենալ ի սպասաւորութիւն մարմնոյ եւ արեան միածնի քո Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք իշխանութիւն եւ պա:

(Սբէ.):— Օրհնեա տէր:

Քաջանայն. — ի ձայն:

Խաղաղութիւն ամենեցուն:

(Ղ. Կ.):— Եւ ընդ հոգւոյդ քում:

(Սբէ.):— Աստուծոյ երկրպագեսցուք:

(Ղ. Կ.):— Առաջի քո տէր: Որդի Աստուծոյ որ:

Մինչ նոքս երգեն՝ Քաջանայն խոնարհեալ երկիր սրբոց սեղանոյն եւ ասացէ զազօթս ի ծածուկ:

Երկիր պագանեմք եւ աղաչեմք՝ եւ խնդրեմք ի քէն բարերար Աստուած, առաքեալ իմեզ եւ յառաջի եղեալ ընծայս յայս՝ զմշտնջենաւորակից քո եւ զէակից սուրբ Հոգիդ:

Ապա բացեալ զծածկոց սկզնն, ասցէ յաչեակ ձեռն զմաղղմայն, եւ երկոյս խաչակնքեացէ զուրբ հացն, եւ հափտարկաւորին կացեալ առ ընթեր խնկարկեացէ:

Քաջանայն. — ի ծածուկ:

Որով զհացս օրհնեալ, մարմինն ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Նախասարկաւազն ի ցած. — Ամէն:

Քաջանայն. — ի ծածուկ:

Որով զհացս օրհնեալ, մարմինն ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Նախասարկաւազն ի ցած. — Ամէն:

Քաջանայն. — ի ծածուկ:

Որով զհացս օրհնեալ, մարմինն ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Նախասարկաւազն ի ցած. — Ամէն:

Եւ եղեալ զմաղղմայն ի վերայ սեղանոյն, ասցէ յաչեակ ձեռն զսկիզն, եւ խաչակնքեացէ երկոյս ասելով:

Քաջանայն. — ի ծածուկ:

Եւ զբաժակս օրհնեալ, արիւն ստուգապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Նախասարկաւազն ի ցած. — Ամէն:

Քաջանայն. — ի ծածուկ:

Եւ զբաժակս օրհնեալ, արիւն ստուգապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Նախասարկաւազն ի ցած. — Ամէն:

Քաջանայն. — ի ծածուկ:

Եւ զբաժակս օրհնեալ, արիւն ստուգապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Նախասարկաւազն ի ցած. — Ամէն:

Ապա զմաղղմայն հանդերձ սուրբ մարմնովն եղեալ ի վերայ սկզնն, խաչակնքեացէ երկոյս՝ ասելով:

Քաջանայն. — ի ծածուկ:

Որով զհացս եւ զգինիս օրհնեալ, մարմինն եւ արիւն ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Նախասարկաւազն ի ցած. — Ամէն:

Քաջանայն. — ի ծածուկ:

Որով զհացս եւ զգինիս օրհնեալ, մարմինն եւ արիւն ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Նախասարկաւազն ի ցած. — Ամէն:

Քաջանայն. — ի ծածուկ:

Որով զհացս եւ զգինիս օրհնեալ, մարմինն եւ արիւն ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի: Փոխարկելով Հոգւովդ քով սրբով:

Նախասարկաւազն ի ցած. — Ամէն:

Ապա համբուրեալ Քաջանայն զսեղանն, սրբեացէ զսկիզն:

(Սբէ.):— Օրհնեա տէր:

Քաջանայն. — ի ձայն:

Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս՝ յանդատապարտութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

(Ղ. Կ.):— Հոգի Աստուծոյ՝ որ զփառակցի:

Քաջանայն ոչ եւս խաչակնքեացէ այսուհետեւ ի վերայ խորհրդոյն, եւ զձեռնն խոնարհաբար զան զսկիզն տարածեացէ, եւ զպան միշտ առ սուրբ խորհուրդն յառեալ ունիցի:

Քաջանայն. — ի ծածուկ:

Սովաւ շնորհեա զտէր՝ զհաստատութիւն եւ զըղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ եկեղեցւոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւազաց, թագաւորաց, աշխարհի, իշխանաց, ժողովրդոց, ճանապարհորդաց, նաւելոց, կապելոց, վտանգելոց, աշխատելոց, եւ ողբ ի պատերազմունս բարբարոսաց: Սովաւ եւ ողոց շնորհեա զբարեխառնութիւն, եւ տնկոց զպտղաբերութիւն, եւ խիտացելոց ի պէս պէս ցաւս՝ փութապէս զառողջութիւն: Սովաւ հանգստ զամենեսեան յառաջագոյն զննջեցեալսն ի Քրիստոս, զնախահարս, զհայրապետս, ըզմարգարէս, զառաքեալս, զվկայեալս, զեպիսկոպոսունս, զերիցունս, զսար-

կաւագունս, եւ զքնաւ ուխտ եկեղեցւոյ քոյ սրբոյ, եւ զամենեսեան՝ որ յաշխարհական կարգէ՝ զարս եւ զկանայս հաւատով վախճանեալս:

(Սբի.):—Օրհնեալ տէր:

Քահանայն. — Ի ձայն:

Ընդ որս եւ մեզ այց արասցես բարերար Աստուած, աղաչեմք:

(Ղա.)—Յիշեալ Տէր եւ ողորմեալ:

Քահանայն. — Ի ձայն:

Աստուածածնի սրբոյ կուսին Մարիամն, եւ Յովհաննու Մկրտչի, Ստեփաննոսի նախավկայի եւ ամենայն սրբոց եղիցի յիշատակի սուրբ պատարագս, աղաչեմք:

(Ղա.)—Յիշեալ Տէր եւ ողորմեալ:

Սարկաւազունք անցեն յաշխարհս սեղանոյն եւ կոցեն կարգաւ, եւ նախասարկաւազին յառաջ մատուցեալ քարոզեցէ. Առաքելոց սրբոց, մարգ:

(Ղա.)—Յիշեալ Տէր եւ ողորմեալ:

(Ներքի.):—Օրհնեալ զովեալ: (Կամ ըստ պարագայի):

(Ղա.)—Փառք յարութեան քո Տէր: (Կամ ըստ պարագայի):

Այս նախասարկաւազին անցեալ Ի դուրս կարգի սարկաւազացն, ձեռնամած ասացեն միմեան, Առաքելոցն մերոց Միանձնացեաց, եւ ընդ զովքն առ մի մի առն ասացեն. Յիշեալ Տէր եւ ողորմեալ: Եւ մինչ նոքա քարոզեն, քահանայն ասացէ զաղօթս Ի ծածուկ:

Յիշեալ Տէր եւ ողորմեալ, եւ օրհնեալ զսուրբ կաթողիկէ եւ զառաքելական եկեղեցի քո, զոր փրկեցեր պատուական արեամբ միածնի քո եւ ազատեցեր խաչին սրբով: Շնորհեալ սմա զանշարժ զխաղաղութիւն:

Յիշեալ Տէր եւ ողորմեալ, եւ օրհնեալ զամենայն ուղղափառ եպիսկոպոսունս՝ որք ուղիղ վարդապետութեամբ համառօտեն Ի մեզ զքանն ճշմարտութեան:

Յիշեալ Տէր եւ ողորմեալ, եւ օրհնեալ զսուրբ կաթողիկէ եւ զառաքելական եկեղեցի քո, զոր փրկեցեր պատուական արեամբ միածնի քո եւ ազատեցեր խաչին սրբով: Շնորհեալ սմա զանշարժ զխաղաղութիւն:

(Սբի.):—Օրհնեալ տէր:

Քահանայն. — Ի ձայն:

Եւս առաւել զԵպիսկոպոսապետն մեր, եւ զպատուական Հայրապետն ամենայն Հայոց զտէր (այս անոսն) կաթողիկոսն շնորհեցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ:

(Ղա.):— Ամէն:

Նախասարկաւազն եւ Սարկաւազունք համբուրեալ զսեղանն եւ անցանելով Ի յետ կուսէ սեղանոյն՝ զնասցեն ի ձախակողմն սեղանոյն, եւ ասացեն միմեան, Գոթոթիսն եւ փոռարանութեան մա:

Մինչ նոքա ասեն՝ Քահանայն աղօթեցէ Ի ծածուկ:

Յիշեալ Տէր եւ ողորմեալ, եւ օրհնեալ զքո առաջի կացեալ ժողովուրդս, եւ զպատարագիս մատուցողս, եւ պարգեւեան սոցա զպիտոյսն եւ զօգտակարսն:

Յիշեալ Տէր եւ ողորմեալ, եւ օրհնեալ զուխտաւորս եւ զպտղաբերիս եկեղեցւոյ քում սրբոյ, եւ որք յիշեն զաղքատս ողորմածութեամբ, եւ հատո նոցա զպարտս նոցա ըստ ընդաքոյս առատութեան քում հարկարպատիկ աստ եւ Ի հանդերձելումը:

Յիշեալ Տէր եւ ողորմեալ, եւ գթալի հոգիս հանգուցելոցն: Հանգս ըզնոսա եւ յուսաւորեան եւ դասաւորեան ընդ սուրբս քո յարքայութեանդ երկնից, եւ արժանի արն ողորմութեան քում:

(Յիշեալ Տէր եւ ողորմեալ ծառայիս քո (այս անոսն) եւ ողորմեալ նմա ըստ մեծի սղորմութեան քում, եւ հանգս այցելութեամբ Ի լոյս երեսոց քոց: Եւ զկենդանիսն փրկեալ յամենայն որոգայթից հոգւոյ եւ մարմնոյ):

Յիշեալ Տէր եւ զայնոսիկ՝ որք յանձնեցին մեզ յիշատակել յաղօթս, ըզկենդանիս եւ զհանգուցեալս, եւ կառավարեան զկամս հայցմանց նոցա եւ զմերս՝ ընդ ուղղորդն եւ որ լինէ փրկութեամբ: Եւ վարձատրեան բուրեցունց զանանց եւ զերանելի բարութիւնսդ:

Եւ զտեալ զխորհուրդս մեր տաճարացն յընդունակութիւն մարմնոյ եւ արեան միածնի քո Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ Հօր ամենակալի հանդերձ կենդանարար եւ աղատիչ սուրբ Հոգւովը վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ:

(Սբի.):—Օրհնեալ տէր:

Քահանայն. — Ի ձայն:

Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ եւ Փրկչիս մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ ձեզ ընդ ամենեսեան:

(Ղա.):— Ամէն. եւ ընդ հոգւոյդ քում:

(Սբի.):— Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեցուք:

(Ղա.):— Տէր ողորմեալ:

(Սբի.):— Ամենայն սրբովք զորս յիշատակեցաք, ևս առաւելապէս զՏէր աղաչեցուք:

(Ղա.):— Տէր ողորմեալ:

(Սբի.):— Վասն մատուցեալ սուրբ և աստուածային պատարագիս որ Ի վերայ սրբոյ սեղանոյս, զՏէր աղաչես:

(Ղա.):— Տէր ողորմեալ:

(Սբի.):— Արպէս զի Տէր Աստուած մեր՝ որ ընկալաւ զսա Ի սուրբ յերկնային և յիմանալի յիւր մատուցարանս՝ զփրկեալսն առ մեզ զնորհս և զպարգէս, զՏէր աղաչեցուք:

նրն, զփրկեալսն առ մեզ զնորհս և զպարգէս և զհոգւոյն սրբոյ, զՏէր աղաչեցուք:

(Ղա.):— Տէր ողորմեալ:

(Սբի.):— Ընկալ կեցո և սղորմեալ և պահեալ զմեզ Տէր քոյին շնորհիւ:

(Ղա.):— Կեցո Տէր եւ ողորմեալ:

(Սբի.):— Չամենասրբուհի Աստուածածին զփշտ կոչարն Մարիամ հանգիւրձ ամենայն սրբովք յիշելով, զՏէր աղաչեցուք:

(Ղա.):— Յիշեալ Տէր եւ ողորմեալ:

(Սբի.):— Եւ ևս միաբանս, Չանձինս մեր, Աղորմեաց:

(Ղա.):— Տէր ողորմեալ: Քեզ Տեառնդ յանձն: Տէր ողորմեալ, Տէր ողորմեալ, Տէր ողորմեալ:

Մինչ քարոզէ Սարկաւազն, Քահանայն բաղկատարած աղօթեցէ Ի ծածուկ:

Աստուած ճշմարտութեան եւ Հայր ողորմութեան, գոհանամք զքէն, որ Ի վեր քան զերանելի նահապետացն՝ զմեր պարտաւորեցոցս առաւել մեծարեցեր զքնութիւն: Վասն զի նոցա Աստուած կոչեցար, իսկ մեզ՝ Հայր հաճեցար անուանիլ գթալով: Եւ այժմ Տէր՝ աղաչեմք զքեզ, զայսպիսի առ Ի քէն զնորոգ եւ զպատուական անուանադրութեանս շնորհ՝ որ ըստ օրէ պայծառացուցեալ ծաղկեցո Ի մէջ եկեղեցւոյ քում սրբոյ:

(Սբի.):—Օրհնեալ տէր:

Քահանայն. — Ի ձայն:

Եւ սուր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր, կարգալ զքեզ երկնաւորը Հայր, երգել եւ ասել:

Գպիւրն բաղկատարած եղանակացն:

Հայր մեր որ յերկնս, սուրբ եղիցի անունս և քն:

Մինչ նոքա երգեն, Քահանայն աղօթեցէ Ի ծածուկ:

Տէր տէրանց, Աստուած աստուծոց, թագաւոր յաւիտեանականս, արարիչ ամենայն արարածոց, Հայր

50-5005



Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Մի տար զմեզ ի փորձութիւն, այլ փրկեան իջարէ եւ ապրեցն ի փորձութենէ:

(Մրէ.): — Օրհնեա տէր:

Քահանայն, — ի ձայն:

Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

(Պ.պ.): — Եւ ընդ հոգւոյդ քում:

(Մրէ.): — Աստուծոյ երկրպագեսցուք:

(Պ.պ.): — Առաջի քո Տէր:

Ամենայն ժողովուրդն իջէ ի ծունկս եւ Քահանայն խնարհեցուցեալ զգուկն յալ կողմն սկզոյն, աղօթեսցէ ի ծածուկ:

Որ աղբիւրդ ես կենաց եւ բղխումն ողորմութեան Հոգիդ սուրբ, ողորմեան ժողովրդեանս, որք խոնարհեալ երկիր պագանեն առաջի Աստուածութեանդ քո: Պահեա զսոսա ամբողջս, տպաւորեան յոգւոյ սոցա զձեւ մարմնոյ ցուցակի, առ ի ժառանգութիւն, եւ ի վիճակ հանդերձելոցդ բարեաց:

(Մրէ.): — Օրհնեա տէր:

Քահանայն երկրպագելով յաշակոյժն սկզոյն՝ ասացէ, Յրեառ, եւ երկրպագելով ի ձախակողմն՝ ասացէ, Յրեառ, եւ երկրպագեալ ի դուրս սկզոյն՝ ասացէ, Տէրաք մերով: Եւն:

Քահանայն, — ի ձայն:

Քրիստոսիլ Յիսուսիլ Տէրամբ մերով, ընդ որում քեզ Հոգւոյդ սրբոյ եւ Հօր ամենակալի վայելի փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

(Նիքոլէ. — Բարձր յայն): — Պաշտումս:

Քահանայն բացէ զծածկոց սկզոյն, եւ ոչ եւս սրբոցէ պատկերեալ, եւ մասամբ երկուց ձեռացն բարձրացուցեալ ի վեր զսուրբ մարմինն ի աես ժողովրդեան, ասացէ բարձր ձայնիւ:

Ի Սրբութիւն Սրբոյ:

Վպիրք եղանակն քաղցր ձայնիւ:

Միայն սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր. ամէն:

Մինչ Վպիրք եղանակն Յիսուս Քրիստոս եւն, Քահանայն բարձրացուցէ ի վեր զսկիզն իտես ժողովրդեան:

(Մրէ.): — Օրհնեա տէր:

(Վ.հ.): — Օրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ:

(Պ.պ.): — Ամէն:

(Մրէ.): — Օրհնեա տէր:

(Վ.հ.): — Օրհնեալ Որդիդ սուրբ Աստուած ճշմարիտ:

(Պ.պ.): — Ամէն:

(Մրէ.): — Օրհնեա տէր:

(Վ.հ.): — Օրհնեալ Հոգիդ սուրբ Աստուած ճշմարիտ:

(Պ.պ.): — Ամէն:

(Մրէ.): — Օրհնեա տէր:

(Վ.հ.): — Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

Վպիրքն եղանակեցոցն:

Ամէն. Հայր սուրբ, Որդիդ սուրբ, Հոգիդ սուրբ. Օրհնութիւն Հօր եւ Որդւոյ եւ:

Եւ մինչ նորա երգեն, Քահանայն խոնարհեսցէ եւ աղօթեսցէ ի ծածուկ:

Նայեանց Տէր մեր Յիսուս Քրիստոս յերկնից ի սրբութենէ քումմէ եւ յաթուոյ փառաց թագաւորութեան քո. եկ ի սրբել եւ ի կեցուցանել զմեզ, որ ընդ Հօր նստիս եւ աստ պատարագիս. արժանի արան տալ մեզ յանարատ մարմնոյ քո եւ ի պատուական արենէ, եւ ի ձեռն մեր ամենայն ժողովրդեանս:

Ապա Քահանայն երկիր պագեալ համբուրեսցէ զսեզանն, եւ զմտզմայն ի բաց աւեալ ի սկզոյն դիցէ ի վերայ սեզանն, եւ աւեալ զսուրբ մարմինն թացցէ ամբողջ յանապական արեւն եւ ասացէ ի ծածուկ:

Տէր Աստուած մեր, որ կոչեսցեր զմեզ յանուն միածնի Որդւոյ քոյ Քրիստոնեայս, եւ շնորհեսցեր մեզ մկրտութիւն հոգեւոր աւազանան ի թողութիւն մեղաց, եւ արժանի արարեր զմեզ հաղորդիլ սուրբ մարմնոյ եւ արեան միածնի քո: Եւ այժմ աղաչեմ զքեզ Տէր, արա ըզմեզ արժանի ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ ի մեղաց թողութիւն, եւ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ եւ սուրբ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտ:

(Նիքոլէ.): — Օրհնեա տէր:

Քահանայն աւեալ զսկիզն հանդերձ սուրբ մարմնոյն ի ձեռքս իւր, ասացէ բարձր ձայնիւ:

Ի սուրբ ի սուրբ պատուական մարմնոյ եւ յարենէ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, (Վարձցի առ ժողովուրդն եւ փոքր ինչ յառաջ գնացեալ բարձրացուցէ զսկիզն) ճաշակեսցուք սրբութեամբ, որ իջեալ ի յերկնից բաշխի ի միջի մերում:

Սա է կեանք, յոյս, յարութիւն, քաւութիւն, եւ թողութիւն մեղաց: Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ, սաղմոս ասացէք երկնաւոր թագաւորիս մերում անմահի՝ որ նստի ի կառս քերովբէականս:

Քահանայն վերազարձցի ի սեզանն, եւ ձգեսցի փոքր վարագարն:

Սարկաւագունք համայն ի ձախակողմն սեզանոյն ժողովեալ սկաւորիցն երգել զՏէր ողորմեայս, եւ Վպիրքն ի դասէն փոփոխակի:

Եւ յաւարտին, Նախասարկաւագն ձոյնէ առ զպիրոսն՝ բարձր ի թիւ:

Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ՝ զՎպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգե:

Վպիրքն եղանակեցոցն:

Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի:

Մինչ նորա երգեն, Քահանայն սուրբ զսուրբ մարմինն ի ձեռքս եւ ասացէ արասուօք ի ծածուկ:

Զոր օրհնութիւն կամ զոր գոհութիւն ի վերայ հացիս եւ բաժակիս ասացուք. այլ Յիսուս զքեզ միայն օրհնեմք հանդերձ Հարբդ եւ ամենասուրբ Հոգւովդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քահանայն յաւեալ զայս իւր ի սուրբ խորհուրդն՝ ասացէ:

Խոստովանիմ եւ հաւատամ, զի դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ, որ բարձեր զմեզս աշխարհի:

Եւ բեկեալ զսուրբ մարմինն ի նորս մասունս, արկցէ ի բաժակն ասելով:

Լրումն Հոգւոյն սրբոյ:

Եւ սպա զմի մասն միայն աւեալ ի ձեռս, աղօթեսցէ ի ծածուկ արասուօք եւ գոհութեամբ առ Հայր եւ Որդի:

Հայր սուրբ, որ անուանեսցեր զմեզ անուանակցութեամբ միածնի քո, եւ լուսաւորեսցեր մկրտութեամբ հոգեւոր աւազանին: Արժանի արան ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ ի մեղաց թողութիւն. տպաւորեան ի մեզ զշնորհս Հոգւոյդ սրբոյ՝ որ պէս ի սուրբ առաքեալսն, որք ճաշակեսցին եւ եղեն մաքրիչք ամենայն աշխարհի: Եւ արդ Տէր Հայր բարերար, զհաղորդութիւնս զայս մասնաւորեան ճաշակման երեկոյին աշակերտացն՝ բառնալով զխաւար մեղաց իմոց: Մի հայիր յանարժանութիւնս իմ, եւ մի արգելուր զշնորհս Հոգւոյդ սրբոյ. այլ ըստ անբաւ մարդասիրութեան քում, պարգեւեան զսաքաւիչ մեղաց, լուծիչ յանցանաց,

որպէս խոստացաւ եւ ասաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս, թէ ամենայն որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ, կեցցէ յաւիտեան: Արդ՝ արա զսա մեզ ի քաւութիւն, զի որք կերիցեն եւ արբցեն ի սմանէ, հանցեն զօրհնութիւն եւ զփառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն:

Գոհանամ զքէն Քրիստոս թագաւոր, որ արժանի արարեր զանարժանս հաղորդիլ սուրբ մարմնոյ եւ արեան քո: Եւ այժմ աղաչեմ ըզքեզ Տէր, մի լիցի սա ինձ ի դատապարտութիւն, այլ ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց, յառողջութիւն հոգւոյ եւ մարմնոյ եւ ի կատարումն ամենայն գործոց աւաքինութեան: Որպէս զի սրբեցցէ սա զշունչքս իմ, եւ զհոգի եւ զմարմին իմ. եւ արասցէ զիս տաճար եւ բնակարան ամենասուրբ Երրորդութեանդ. զի ընդ սուրբս քո արժանի եղէց փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ սուրբ Հոգւոյդ այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԱՂՕԹՔ ՅՈՂԱԿՆՆՈՒ ՈՍԿԵՒԵՐԱՆԻ.

Գոհանամ եւ մեծացուցանեմ եւ փառաւորեմ զքեզ Տէր Աստուած իմ, զի զիս զանարժանս արժանացուցեր յաւուր յայսմիկ հաղորդակից լինել աստուածային եւ սոսկալի խորհրդոյ քոյ անարատ մարմնոյդ եւ պատուական արեանդ. վասն այսո-

րիկ զսոսա ի բարեխօսութիւն ունելով, աղաչեմ յամենայն աւուրս եւ ի ժամանակս կենաց իմոց ընդ սրբութեան քում պահեա՛ զիս. որպէս զի յիշելով զբարեգլխութիւնս քո եւ կենդանի եղէց ընդ քեզ, որ վասն մեր չարչարեցար եւ մեռար եւ յարեար: Մի մերձեցցի Տէր իմ եւ Աստուած՝ խորտակիչն, կնքելով անձին իմոց պատուական արեամբք քով: Ամենակարող, մաքրեա՛ զիս սոքօք յամենայն մեռելոտի գործոց իմոց, որ միայնդ ես անմեղ: Ամրացո՛ զկեանքս իմ Տէր, յամենայն փորձութենէ, եւ զպատերազմողն իմ դարձն յինէն յետս՝ պատկառեալ եւ ամաչեցեալ՝ որչափ յառնէ ի վերայ իմ: Ամրացո՛ զզնացս մտաց եւ լեզուի իմոց, եւ զամենայն ճանապարհս մարմնոյ իմոց: Լեր հանապազորդ ընդ իս՝ ըստ անսուտ խոստման քո, թէ որ ուտէ զմարմին իմ, եւ ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեացէ եւ ես ի նմա: Գու ասացեր մարդասէր, կացո՛ զբանս աստուածային անլուծանելի հրամանաց քոց, քանզի դու ես Աստուածողորմութեան, եւ գլխութեան եւ մարդասիրութեան եւ պարգեւիչ ամենայն բարեաց, եւ քեզ վայելէ փառք հանդերձ Հարբդ եւ ամենասուրբ Հոգւովդ այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտ:

Եւ աստ տեառնադրելով զինքն, խնդրեցէ Աստուծոյ զզէս պէս հայցուածս վասն իւր եւ ժողովրդեան, եւ թողութիւն խնդրեցէ իւրոց յանցաւորացն թշամեաց եւ անկեաց, եւ անգէն ասացէ:

Հաւատով հաւատամ յամենասուրբ Երրորդութիւնդ ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգի սուրբ:

Եւ ասա ասիւ եւ դողութեամբ ճաշակեցէ զմասն որ ձեռնին իւրում է՝ ասելով:

Հաւատով ճաշակեմ զսուրբ եւ զկենարար եւ զփրկագործ մարմինս քո Քրիստոս Աստուած իմ Յիսուս, ի թողութիւն մեղաց իմոց:

Եւ արբցէ ի բաժակէն ասելով:

Հաւատով ըմպեմ զսրբարար եւ զմաքրիչ արիւնս քո Քրիստոս Աստուած իմ Յիսուս, ի թողութիւն մեղաց իմոց:

Եւ յետ ճաշակելոյ ի մարմնոյ եւ յարեան Տեառն, ասացէ:

Մարմին քո անապական լիցի ինձ ի կեանս, եւ սուրբ արիւն քո ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Եթէ իցեն արժանաւորք հաղորդութեան յեկեղեցականոց՝ հաղորդեցին ի սեղանն ի ներքին կողմն վարագուրին. եւ ասա բացի վարագուրն, եւ նախասարկաւազն դոչեցէ առ ժողովուրդն բարձր ձայնիւ:

Երկիւղիւ եւ հաւատով յառաջ մատիք եւ սրբութեամբ հաղորդեցարուք:

Քահանայն ունելով զսուրբ խորհուրդն ի ձեռնն դարձցի առ ժողովուրդն եւ յառաջ զնացէ փոքր ինչ. եւ եթէ իցեն արժանաւորք, Քահանայն ի ծունկս իջեալ ի բեմին հաղորդեցէ զնոսա, եւ սարկաւազն կայցէ զսկի՛նն դաստառակաւ ի ձախմէ Քահանային:

Ի ժամ հաղորդութեան դպիրքն եղանակեցեն զշարական ԳՁ, Վերաձգոն երկնից. կամ Այսօր անձառ: Երտ հաղորդութեան, յոր ժամ կանգնի Քահանայն, դպիրքն եղանակեցեն քաղցր ձայնիւ, Աստուած մեր եւ Տէր մեր երեւցաւ մեզ. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Քահան. ունելով զսկի՛նն ի ձեռնն օրհնեցէ զժողովուրդն ասելով:

Կեցո՛ Տէր զժողովուրդս քո, եւ օրհնեա՛ զժառանգութիւնս քո. հովուեա՛ եւ բարձրացո՛ զսոսա յայսմ հետէ մինչեւ յաւիտեան:

(Գ.պ.) — Լցաք ի բարութեանց քոց Տէր, ճա:

Քահանայն դարձցի ի սեղանն, ձգեցի վարագուրն եւ ճաշակեալ զմնացեալս ի մարմնոյ եւ յարեան, մաքրեցէ զսկի՛նն շինջ, ասելով զաղօթս ի ծածուկ:

Գոհանամք զքէն Հայր ամենակալ, որ պատրաստեցեր մեզ նաւահան-

գիստ սուրբ զեկեղեցի՝ տաճար սրբութեան, ուր փառաբանի սուրբ Երրորդութիւնդ: Ալէլուիա:

Գոհանամք զքէն Քրիստոս թագաւոր, որ պարգեւեցեր մեզ կենդանութիւն կենարար մարմնով եւ արեամբ քով սրբով, շնորհեա՛ զքաւութիւն եւ զմեծ զողորմութիւն: Ալէլուիա:

Գոհանամք զքէն Հոգիդ ճշմարիտ, որ նորոգեցեր սուրբ զեկեղեցի, անարատ պահեա՛ հաւատով Երրորդութեանդ յայսմհետէ մինչեւ յաւիտեան: Ալէլուիա:

Ձկնի Լցաք ի բարութեանց սարկաւազն քաղցրեցէ: Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեցուք:

(Գ.պ.) — Տէր ողորմեա՛:

(Սրբ.) — Եւ ես հաւատով ընկալեալք յԱստուածային՝ սուրբ՝ երկնային՝ անմահ՝ անարատ եւ յանապական խորհրդոյս, զՏեառնէ գոհացարուք:

(Գ.պ.) — Գոհանամք զքէն Տէր, որ կերակրեցեր զմեզ. ևն:

Քահանայն ասացէ զաղօթս ի ծածուկ:

Գոհանամք զքէն Քրիստոս Աստուած մեր, որ զայսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ ի սրբութիւն կենդանութեան. սովիմք պահեա՛ զմեզ սուրբս եւ անարատս, բնակեալ զմեզ քո աստուածային խնամօրդ: Հովուեա՛ զմեզ յանդատանի կամաց քոց սրբոց եւ բարեսիրաց, որով ամրացեալք յամենայն բանսարկուին ընդդէմութեանց, քում եւեթ արժանի եղիցուք լսել ձայնի, եւ քեզ միայնոյ քաջայաղթ եւ ճշմարիտ հովուիդ հետեւել, եւ առ ի քէն ընդունել զպատրաստեալ տե-



զի յարքայութեանդ երկնից : Աստուած մեր եւ Տէր, եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս, որ ես օրհնեալ ընդ Հօր եւ ընդ սուրբ Հոգւոյդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտե :

Խաղաղութիւն ամենեցուն :

Անքնին, անհաս, երբեակ ինքնութեանդ, հաստիչ, ընդունող եւ անբաժանելի, միասնական սուրբ Երրորդութեանդ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ :

Քաջանայն լուսեալ զձեռս՝ գիցէ զիցն. եւ եթէ կցի Երկուցոս զձեռս, եւ զԵրկուցն զԵրկուցոս, ապա բացցի վարդապետ :

(Սբ. Գ.) :— Օրհնեալ տէր :

Եւ Քաջանայն երկրպագեալ սուրբ սեղանոյն առցէ զսուրբ աւետարանն ի ձեռս, եւ ընդ հարաւայնս աստիճանն իջանելով ի դասն, ասացէ ի ձայն :

Որ օրհնես զայնոսիկ՝ ոյք օրհնեն զքեզ Տէր, եւ սուրբ առնես զյուսացեալս ի քեզ :

(Պ. Գ.) :— Օրհնեալ է Աստուած :

Կեցն զժողովուրդս քո եւ օրհնես զժառանգութիւնս քո. զլրումն Եկեղեցւոյ քո պահես :

(Պ. Գ.) :— Ամէն :

Սրբեան զասա որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քո. գուզմեզ փառաւորեա աստուածային զօրութեամբ քով, եւ մի թողաւր զյուսացեալս ի քեզ :

(Պ. Գ.) :— Ամէն :

Չխաղաղութիւն պարգեւեան տեւայն աշխարհի, եկեղեցեաց, քա-

հանայից, թագաւորաց քրիստոնէից, եւ զինաւորեալ մանկանց նոցա եւ ամենայն ժողովրդեանս :

(Պ. Գ.) :— Ամէն :

Չի ամենայն սուրբ բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալ առ ի քէն, որ ես Հայր լուսոյ՝ եւ Քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն :

Եւ դպիրքն երգեսցին՝ որկոս :

Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմ հեռէ մինչեւ յաւիտեան :

Քաջանայն — ի ձայն :

Կատարումն օրինաց եւ մարգարէից՝ դու ես Քրիստոս Աստուած Փրկիչ մեր, որ լցեր զամենայն հայրակամ տնօրէնութիւնս քո, լից եւ զմեզ Հոգւովդ քով սրբով :

(Սբ. Գ.) :— Օրիթի :

Քաջանայն գունաղով առ ժողովուրդն ասացէ :

Խաղաղութիւն ամենեցուն :

(Պ. Գ.) :— Եւ ընդ հոգւոյք քում :

(Սբ. Գ.) :— Երկիւղածութեամբ լուարուք :

(Պ. Գ.) :— Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու :

(Պ. Գ.) :— Փառք քեզ Տէր Աստուած մեր :

(Սբ. Գ.) :— Պաշտումս :

(Պ. Գ.) :— Ասէ Աստուած :

Ի Հօրէ լուսոյ :

Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն :

Նա էր իսկզբանէ առ Աստուած : Ամենայն ինչ նովաւ եղեւ՝ եւ առանց նորա եղեւ եւ ոչինչ՝ որ ինչ եղեւն :

Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան : Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէր, եւ խաւար նմա ոչ եղեւ հասու :

Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ՝ անուն նմա Յովհաննէս. սա եկն ի վկայութիւն, զի վկայեսցէ վասն լուսոյն. զի ամենեքին հաւատասցեն նովաւ :

Ոչ էր նա լոյսն, այլ զի վկայեսցէ վասն լուսոյն :

Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ :

Յաշխարհի էր, եւ աշխարհ նովաւ եղեւ, եւ աշխարհ զնա ոչ ծանեաւ :

Յիւրսն եկն՝ եւ իւրքն զնա ոչ ընկալան : Իսկ որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել, որոց հաւատասցեն յանուն նորա :

Ոյք ոչ յարենէ, եւ ոչ ի կամաց մարմնոյ, եւ ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան :

Եւ Բանն մարմին եղեւ, եւ ընակեաց ի մեզ. Եւ տեսաք զփառս նորա՝ զփառս իբրեւ զմիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք եւ ճշմարտութեամբ :

(Սբ. Գ.) :— Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ. ամենակալ Տէր Աստուած մեր կեցո եւ ողորմեա :

(Պ. Գ.) :— Պահպանեան զմեզ Քրիստոս Աստուած մեր ընդ հովանեալ սուրբ եւ պատուական Խաչի քո ի խաղաղութեան. փրկեան յերեւելի եւ յաներեւոյթ թշնամոյն. արժանաւորեան գոհովութեամբ փառաւորել ըզքեզ ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի :

(Սբ. Գ.) :— Օրհնեցից զՏէր յամենայն ժամ. յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ :

Եւ Քաջանայն խաչակրեսցէ սուրբ աւետարանն ի վերայ ժողովրդեան ասելով :

Օրհնեալ եղերուք ի շնորհաց սուրբ Հոգւոյն, երթայք ի խաղաղութիւն. եւ Տէր Յիսուս եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան :

Եւ դպիրքն մինչ ասեն ի Տէր պարծեսցի, բաշխեսցի Ման աւանայն ժողովրդեանս. Եւ Քաջանայն դարձցի յարեւելս եւ երկիրպագցէ առաջի բեմին. Եւ մտեալ յաւանդատունն մերկացի իզգեստուցն :

ՎԵՐՔ



860

0027592

860

<< Ազգային գրադարան



NL0027592

